ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ ԱՐՄԱՆ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Անտոնյան

Ի պատասխան Ձեր 06.07.2020թ. հ.20/66382 գրության՝ հայտնում եմ.

Համաձայն Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության և Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի կողմից ներկայացված տեղեկատվությունների՝ Ջուղայի փող. հ.5 բազմաբնակարան բնակելի շենքն ընդգրկվել է քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային աստիճան ունեցող շենքերի ցանկում: Հիմք ընդունելով նշված որոշումը և հաշվի առնելով <<Հայսեյսմշին և ԿՊ ԳՀԻ>> ԲԲ ընկերության 13.12.2007թ. հ.02/207 մասնագիտական եզրակացությունը, Երևանի քաղաքապետարանի կողմից 2007թ. դեկտեմբեր ամսին նշված բնակելի շենքը իրացվել է, բնակիչները վերաբնակեցվել են: Բնակելի շենքը ենթակա է քանդման, և այնտեղ բնակվելը վտանգավոր է: Ներկա պահին բնակիչները շենքում ապրում են ապօրինի, ինչը վտանգ է ներկայացնում նրանց կյանքի համար:

Միաժամանակ հայտնում ենք, որ համաձայն ՀՀ կառավարության 2016թ. հոկտեմբերի 12-ի <<ՀՀ կառավարության 2000թ. հոկտեմբերի 25-ի հ.682 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին >> հ.1559-Ն որոշման 1-ին կետի <<Է>> ենթակետի համաձայն առաջարկվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության պետին, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահին, ՀՀ ոստիկանության պետին և Երևանի քաղաքապետին /Երևանի թաղային համայնքների ղեկավարներին/ սույն որոշման ուժի մեջ մտնելուց հետո 4-րդ կարգի վնասվածության աստիճան ունեցող քանդման ենթակա բնակելի տների բնակեցումից ազատված բնակարաններում չիրականացնել քաղաքացիների կրկնակի բնակեցում, հաշվառում և գույքային գործարքների պետական գրանցում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ